

Ներսես Աթաբեկյան

ՖՐԱՆՍՈՒԱ ՎԻՅՈՆ

Անառակ ու հարբեցող,
համարյա ճաղատ:
Կյանքը անցավ հեշտ ու ցոփ.
ո՞ւմն ես, կախաղան:

Լրբանալով լրբի հետ,
գողին գողակից,
մի քանի երգ,- վերջին ե՞լք
մահվան ծուղակից:

- Խաղը ձերն է, բախտն էլի
իմ կողքով անցավ:
Կախ է տալիս դռներից
գրպանները ծակ:

Ու գնում է գլխիկոր,-
բոլորին ի տես,-
որ բերի ծակ գլխարկով
հերվա ձյունը - ձեզ:

Գնում է մեն ու մենիկ,
անստվեր անգամ,
անհաջողակ անվանի
ու մահապատկան:

Եղեք մի քիչ ողորմած
(թեկուզ՝ կատակով),
մինչեւ մահը ողորմա
կանեփաթոկով:

Ֆրանսուա՞ն է: Անանուն
Ֆրանսուա Վիյոն,-
գրույցի պես հինավուրց,
որ չի հնանում:

Ամենատե՛ր ու անտո՛ւն,
արքա՛ աներկիր,-
մի քանի երգ ողջ կյանքում,
ու կյանքը՝ երգի՛ն:

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Քեզ իմ կարոտի տունը կտանեն:
Այնտեղ մեզ ոչ ոք չի նմանակի:
Ու ժամանակի կորած մատանին
իր երթելեկը կշարունակի:

Լույսը կբացվի առավոտ վեցին:
Կրկնափեղկերը կլինեն կանաչ,
եւ ավարտվածից ու անավարտից
կխոսեն նախկին գեղեցիկ կանայք:

Մեզնից կմնա մահվան թափանցիկ
մաշկի պես շշուկ ու ձմձաղիկներ,
երբ սայթաքենք ներս, ինչպես լուսանցքից
վրիպած տողն է սուզվում երգի մեջ:

Անվկա՜... Այդպես ներկայանակի
հիշողությունն են ստուգաբանում,
ապավինում են կանաչ տնակին
ու լուսաբացին քնով են ընկնում...